ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 , Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan,
secretariat@escs.am,www.escs.am

No 08.1/11944-2021 «03» 06 2021թ

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի
տնօրեն պարոն Ա. Ասատրյանին

Հարգելի պարոն Ասատրյան.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն այնպիսի ժամկետներում, որպեսզի 2021 թվականը ընդգրկող ժամանակահատվածից սկսած ապահովի տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը: Սակայն, մինչ օրս՝ նախարարության կողմից 26.03.2021թ թիվ 01//5896-2021 և 02.04.2021թ թիվ 01//6635-2021 գրություններով ներկայացված զգուշացումներից հետո միայն, Ձեր կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարի վավերացմանն է ներկայացվել հաստատված՝ նախարարության ներքին աուդիտի 2021-23 թվականների ռազմավարական և 2021 թվականի տարեկան ծրագրերը: Ընդ որում, վավերացման ներկայացված՝ հաստատված վերոնշյալ ծրագրերը, մինչև Ձեր կողմից հաստատումը, չեն ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն ու հավանությանը, ինչպես սահմանված է վերոնշյալ Պայմանագրի թիվ 1 հավելվածով: Այդ ծրագրերը նաև էականորեն տարբերվում են նախարարության կողմից Ձեզ տրամադրած նույն ծրագրերից: Մասնավորապես, առանց

հիմնավոր գնահատումների և քննարկումների, վավերացման ներկայացված վերոնշյալ տարեկան ծրագրում ներառվել են Պայմանագրով սահմանված թվաքանակից շուրջ 3 անգամ պակաս աուդիտի միավորներ (ՀՀ ԿԳՄՍ նախարարի և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կողմից քննարկման արդյունքում հավանությանը արժանացած 41 միավորի փոխարեն՝ 14): Բացի այդ, մինչ այժմ չկատարված պարտավորություններից են նաև՝ կատարողի աշխատանքային ռեսուրսների առկայության երաշխավորության մասին գրավոր հավաստիացում և հայտարարություն ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի միջավայրը գնահատելն ու փաստաթղթավորելը, նախարարության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները սահմանելը, ընթացիկ տարվա ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը կազմելը և ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի վերաբերյալ կատարողի գրավոր կարծիքը ներկայացնելը, նախարարությունում Ձեր առնվազն 1 աշխատակցի մշտական ներկայությունն ապահովելը: Այսինքն, ըստ էության, անցած ժամանակահատվածում, խախտելով պայմանագրային պարտավորությունները, Ձեր թերացումների արդյունքում չի ապահովվել նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթների կատարումը:

Ելնելով վերոգրյալից, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը՝ միակողմանի լուծում է Ձեզ հետ 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագիրը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Подписано: GASPARYAN VAHRAM 3203740222

Կատ. ՀՀԿԳՄՍՆ գնումների վարչություն
հեռ. 010599666